Հաստատում եմ՝

ՇՊՀ-ի ռեկտորի ԺՊ Ե. Ա. Մերոբյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նաիրա Արարատի Թոռունյանի «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Սույն ատենախոսության թեման ու հիմնախնդիրներն արդիական են այն առումով, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում ի հայտ են գալիս կրթության նոր խնդիրներ, որոնք թելադրում են դրանց լուծման արդիական ուղիների անհրաժեշտություն: Անկասկած, անձի հաղորդակցական կարողության ձևավորման գործընթացում կարևոր դեր ունի մայրենիին տիրապետելը՝ որպես ազատ և նպատակային հաղորդակցվելու, սոցիալ-տնտեսական բոլոր բնագավառներում խոսքային արհեստավարժ գործունեություն ծավալելու, հանրային կյանքի տարբեր ոլորտներում տեղեկատվական հոսքին արագ արձագանքելու միջոց:

Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները կարևորվում են մայրենիի ժամանակակից դասագործընթացում, իսկ դրանց մշակումը հնարավորություն է տալիս մայրենիի ուսուցիչներին լիարժեք կազմակերպելու մայրենիի դասերը և հասնելու ծրագրային նյութի ամբողջական և նպատակային մատուցման: Ատենախոսության մեջ Ն. Թոռունյանն անդրադարձել է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման ուղիների առանձնահատկություններին, անհրաժեշտ մեթոդների ընտրությանը, միմյանց վերալրացնելու միջոցով դրանց գործադրմանը: Ատենախոսությունը ներառում է օգտակար հարցադրումներ, որոնք մեկնաբանված են ժամանակակից նվաճումների համատեքստում:

Ատենախոսությունն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն. Ն. Թոռունյանն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել ու արդի մոտեցումների

տեսանկյունից վերլուծել է սովորողների բառապաշարի հարստացմանն ուղղված տեսությունները՝ առկա հայ և արտասահմանյան մեթոդամանկավարժական գրականության մեջ, մշակել և ուսուցման գործընթացում փորձարկել է տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի ուսումնասիրման հնարավորությունները ուսումնառողների բառապաշարի հարստացման նպատակով, կատարված հետազոտության նպատակի և խնդիրների տեսանկյունից դրանք համադրել է ուսումնասիրության արդյունքներին՝ անելով համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ:

Ն. Թոռունյանի ատենախոսությունը կազմված է երեք գլխից:

Առաջին գլխում ատենախոսն անդրադարձել է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման հիմնախնդրի պատմատեսական նախադրյալներին, ներկայացրել է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործընթացը ժամանակակից դպրոցում: Գնահատելի է այն փաստը, որ ատենախոսը, հիմք ընդունելով հայ մեթոդիստ-մանկավարժների առաջարկած մեթոդները, անհրաժեշտ է համարում լրամշակել միմյանց վերալրացնող մեթոդական համալիր սովորողների համագործածական բառապաշարը հարստացնելու համար՝ հատկապես կարևորելով այս ուղղությամբ կատարվող աշխատանքների շարունակականությունը:

Հետազոտության թեմայի նպատակը և առաջադիր խնդիրների լուծման հնարավոր ուղիներն ատենախոսը քննել է աշխատանքի *երկրորդ գլխում՝* անդրադառնալով բնագրի շուրջ բազմաբնույթ աշխատանքներին, տարրական դասարաններում գործող մայրենիի դասագրքերի բնագրերում առկա նորածանոթ և թեմատիկ բառաշարքերի շուրջ բառային աշխատանքի արդյունավետ ուղիներին: Սույն գլխում՝ բնագրերի վերևում, «Հենակետային բառեր» ենթակետի զետեղումն ուշագրավ է, քանի որ դա հնարավոր է դարձնում սովորողի ուշադրության կենտրոնացումը թեմատիկ բառաշարքի և կամ նորածանոթ բառերի վրա՝ այդ կերպ ավելի դյուրին դարձնելով բառիմաստի *գիտակցում-յուրացում-ըմբռնում* ճանաչողական-իմացական շղթան՝ նպաստելով սովորողների բառապաշարի հարստացմանը: Այս առումով ատենախոսը կատարել է լուրջ ընդհանրացումներ՝ ներդնելով սովորողների բառապաշարի հարստացման նպատակով գործնական վարժությունների համալիր:

Ն. Թոռունյանը երկրորդ գլխում կարևորում է նաև հոմանիշ ու հականիշ բառերի գործածության ուսումնասիրումը՝ վերջնարդյունքում որպես կապակցված և հարուստ

խոսք կառուցելու միջոց, ինչպես նաև բառի, արմատի, ածանցի, ածանցավոր ու բարդ բառերի ճանաչումը, գիտակցումն ու յուրացումը՝ որպես բառապաշարի հարստացման և ակտիվացման միջոց: Այս իմաստով հետազոտության արժանիքներից կարելի է համարել այն, որ ատենախոսին հաջողվել է տալ առաջադիր խնդրի լուծման ուղիները՝ գործնական վարժություններով համալրելով բառերի ձևաիմաստային և բառակազմական աշխատանքները՝ որպես խոսքակազմական միավոր ընտրելով և՛ բառակապակցությունը, և՛ նախադասությունը, և՛ կապակցված խոսքը: Հարկ է կարևորել նաև ատենախոսի կողմից ուսուցման համակարգում առաջարկվող բառակազմական, ձևաիմաստային և հարցադրումային կաղապարների ներդրումը վարժությունների համակարգում: Ուշագրավ է ատենախոսի այն տեսակետը, որ լեզվական կաղապարային եղանակով վերլուծություններն ու համադրությունները նպաստում են աշակերտի կողմից իմաստաարտահայտիչ ածանցների ճանաչմանը, բառիմաստի յուրացմանը, խոսքակազմական ունակությունների դրսևորմանը և արագ մտածելու կարողության խթանմանը:

Աշխատանքի *երրորդ գլխում* Ն. Թոռունյանը քննել է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման առնչությունները: Տարրական դասարաններում քերականական նյութի ուսումնասիրումը նպաստում է աշակերտների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության և լեզվամտածողության զարգացմանը: Ատենախոսության արժանիքներից է նաև այն, որ որպես խոսքի զարգացման միջոց է դիտարկվել տարրական դասարաններում քերականական հարցերով բառերի միջև կապեր ստեղծելու ունակության, մայրենիի դասագրքերի բնագրերում գործածված բայերից խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորման անհրաժեշտությունը: Հաճախ սովորողները դժվարանում են քերականական հարց առաջադրել նախադասության անդամներին, շփոթեցնող են հատկապես խնդրառական հարցերը, սակայն հայտնի է նաև, որ սխալ հարցադրման պատճառով սովորողները շարահյուսական կառույցներում (նախադասության մեջ) երբեմն գործածում են քերականորեն սխալ բառաձևեր՝ ստեղծելով իմաստային և ոճական սխալներ: Այս իմաստով ևս ատենախոսը կատարել է մեթոդական կարևոր ընդհանրացումներ:

Ն. Թոռունյանը կարևորում է նաև տարրական դասարաններում դասավանդվող այլ առարկաների միջոցով սովորողների բառապաշարի հարստացումը:

Աշխատանքի *երրորդ գլխում* քննարկվում են հիմնախնդրին վերաբերող մեթոդական համակարգեր, մեթոդներ, ներկայացվում են իրականացրած փորձարարությունն ու ընթացքը, արդյունքները, որոնք ամբողջությամբ վերլուծվում են հեղինակի կողմից: Կատարված է նկատելի փորձարարական աշխատանք, ինչը համակարգված, հիմնավորված ներկայացված է աշխատանքում, կան ուշագրավ վերլուծություններ, արված են գրագետ եզրակացություններ, առաջարկներ: Այս գլուխն ավարտվում է թեմայի հիմնախնդրի ուղղությամբ իրականացված փորձարարական աշխատանքների ընթացքի վերլուծությամբ և արդյունքների հիման վրա մշակված մեթոդական երաշխավորություններով: Ն. Թոռունյանը հետազոտություններն իրականացրել է 2-րդ, 3-րդ, 4-րդ փորձարարական և ստուգողական դասարաններում տարբեր թեմատիկ բառախմբերի շուրջ:

Փորձարարական 4 փուլով հետազոտական աշխատանքները վկայում են, որ ատենախոսն մանրամասն մշակել ու փորձարկել է սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ մեթոդապես միմյանց վերալրացնող մեթոդներ ու հնարներ, թեմատիկ բառաշարքերի և լեզվական որոշ իրողությունների շուրջ տարաբնույթ աշխատանքներ ու վարժությունների համակարգ, ամփոփել արդյունքները, որոնց հիման վրա մշակել է մեթոդական երաշխավորություններ: Ատենախոսը փորձարարական աշխատանքի վերլուծությունը ներկայացրել է համապատասխան տրամագրերում (25 տրամագիր), ինչը համոզիչ է և բացահայտում է սովորողների՝ բառակապակցություն կազմելու ունակության, բնագրի շուրջ բառային, լեզվական աշխատանք կատարելու, կապակցված խոսք ձևակերպելու կարողության մակարդակը:

Ն. Թոռունյանը առաջարկել է գործնական վարժությունների բազմաբնույթ համալիր՝ նոր մոտեցումներով աչքի ընկնող, որը կնպաստի ոչ միայն սովորողների բառապաշարի հարստացմանը, խոսք կազմելու կարողությունների զարգացմանը, այլև նրանց բառապաշարում սովորած բառերի ակտիվացմանը և օտարաբանությունների մաքրմանը:

Ատենախոսության վերջում ներկայացված են հավելվածներ, ինչը լուրջ աշխատանքի արդյունք է և ատենախոսության արժանիքներից կարելի է համարել. բառերի թեմատիկ խմբերը, ածանցավոր և բարդ բառերի դասակարգված շարքերն իրապես արժեքավոր են և շատ օգտակար տարրական դասարաններում

դասավանդող ուսուցիչներին մայրենիի դասագործընթացը արդյունավետ կազմակերպելու համար:

Այսպիսով, ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է թեմայի հետազոտական նպատակներին, նշված են առաջադիր խնդիրների լուծման ուղիները, ասելիքը ներկայացված է գիտական հստակ շարադրանքով, եզրակացությունները բխում են կատարված հետազոտությունից, այն ունի գիտատեսական, գիտագործնական կարևոր նշանակություն տարրական դպրոցում մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի հարցերին առնչվող բոլոր գործընթացներում, իսկ հետազոտության նյութերն ու մշակված երաշխավորությունները կարող են օգտակար լինել բուհերի՝ համապատասխան բաժինների ուսանողներին, հանրակրթական դպրոցի մայրենիի ուսուցիչներին, դասագրքաստեղծ մասնագիտական խմբերին և վերապատրաստման դասընթացներ անցկացնող մեթոդիստներին:

Գնահատելով Ն. Թոռունյանի իրականացրած ուսումնասիրությունների ընթացքն ու արդյունքները՝ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ աշխատանքում տեղ են գտել որոշ *կետադրական, տպագրական վրիպակներ* (տե՛ս 3, 4, 16, 48, 49, 60, 85, 90, 120, 152 էջերը), *շարադրանքի անհարթություններ* (ինչպես՝ էջ 53-ի միտքը չի հասկացվում՝ «....., որ դրանք բավարար նյութ են պարունակում, ***հընթացս*** բառային այլ աշխատանքների» (կամ՝ բառային այլ աշխատանքներին ***զուգահեռ***) արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար), իսկ *բովանդակային* առումով ամբիոնն ունի մի քանի դիտողություններ և առաջարկություններ: Այսպես՝

1. Ատենախոսն իր հետազոտական ուսումնասիրությունները հիմնականում իրականացրել է Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., «Մայրենի 2», Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, «Մայրենի 3» և Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 4» դասագրքերի շրջանակներում: Ըստ ամբիոնի մասնագետների՝ հետազոտությունն ավելի ամբողջական և շահեկան վիճակում կլիներ, եթե ուսումնասիրվեին նաև Սարգսյան Վ. և ուրիշներ 2-րդ և 3-րդ դասարանների մայրենիի դասագրքերի բնագրերը:
2. Ատենախոսն օգտվել է հարուստ մասնագիտական գրականությունից՝ ուսումնասիրելով և՛ հայ, և՛ ռուս, և՛ արտասահմանյան մեթոդիստ-մանկավարժների աշխատանքներն ու մենագրությունները, ինչի արդյունքն արտացոլված է ատենախոսության բովանդակության մեջ: Սակայն, մեր կարծիքով, ատենախոսության առաջին գլխում ներկայացրած «*Հիմնախնդրի դրվածքը հայ և արտասահմանյան*

մեթոդիկայում» ենթագլուխն առավել ամբողջական և ընդգրկուն կլիներ, եթե առավել անդրադարձ կատարվեր ռուս մեթոդիստ-մանկավարժներից հատկապես Գ. Ֆորմաչովայի, Վ. Շատալովի աշխատություններին:

3. Ատենախոսության ներածական մասը, որ նվիրված էր տեղեկատվության արդի վիճակին և հասարակական արժեքին ու հետևանքներին, կարելի է կրճատել և փոխարինել խոսքի զարգացմանն ուղղված հարցերի արծարծմամբ:
4. Ն. Թոռունյանը ատենախոսության մեջ իրավացիորեն անդրադարձել է մայրենիի դասագրքերի բնագրերի բայերից խնդրառական հարցեր առաջադրելու սովորողների կարողության ձևավորման անհրաժեշտությանը: Կարծում ենք՝ լեզվական տրամաբանություն զարգացնելու առումով պակաս կարևոր չէ նաև պարագայական հարցադրում առաջադրելու սովորողների կարողության ձևավորման անհրաժեշտությունը: Առավել շահեկան ենք դիտարկում այն հանգամանքը, որ սովորողների՝ հարց առաջադրելու ունակության ձևավորումը ատենախոսը դիտարկեր պարզից բարդ սկզբունքով՝ պարագայական հարցադրումներից անցում կատարելով խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորմանը:
5. Ատենախոսության երրորդ գլուխը կրում է *«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման առնչությունները»* խորագիրը, որը նվիրված է մեթոդիկաների, մեթոդական համակարգի ուսումնասիրությանն ու վերլուծությանը, մշակված մեթոդական երաշխավորությունների հիմնավորմանը, որն ինչ-որ կերպ պետք է արտահայտվեր կամ ներկայացվեր գլխի վերնագրում:
6. Գիտական նորույթի առաջին պարբերությունում ներկայացված է, որ մշակված «մեթոդական համալիրը կիրառելի է ինչպես տարրական, այնպես էլ հիմնական և ավագ դպրոցներում»: Իրականում կատարված է հսկայական փորձարարական աշխատանք տարրական դպրոցի շրջանակում, ուստի, կարծում ենք, հիմնական և ավագ դպրոցներում մեթոդական համալիրի կիրառության փաստը կարելի էր ներկայացնել հետազոտության գործնական նշանակության տեսանկյունից:
7. Սեղմագրում ներկայացված հետազոտության անցկացման բաղադրիչները՝ ***նպատակ, առարկա, վարկած*** ատենախոսությունում փոքր-ինչ տարբեր են:

Նշված դիտողությունները մասնակի են և չեն ստվերում ատենախոսության գիտամեթոդական արժեքը: Ն. Թոռունյանի «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով թեկնածուական

ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտության թվանիշին, ուստի սույն ատենախոսությունը համատեղ քննարկող ամբիոնները գտնում են, որ այն կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության, իսկ ատենախոս Նաիրա Արարատի Թոռունյանն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ՝

Ա. Ա. Ավագյան (բ.գ.թ., դոցենտ)

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ՝

Լ. Հ. Ղուկասյան(մ.գ. թ., դոցենտ)

Ամբիոնների վարիչների ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ Կ. Ռ. Պետրոսյան (կ. գ. թ., դոցենտ)